ԱՐՄԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
բ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
Իրանի բաժին, գիտաշխատող,
ԵՊՀ իրանագիտության ամբիոն, ասիստենտ
էլ. փոստ՝ armen.israyelian@gmail.com
DOI: 10.56813/2953-786X-2023.3-161

«ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ» ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Ներածություն

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում Նախիջևանի դերն էականորեն աճեց: Եթե մինչ այդ երկրամասի աշխարհագրական դիրքն ավելի շատ Իրանի և Թուրքիայի տարածաշրջանային հավակնությունների համատեքստում էր կարևորվում, ապա հետպատերազմական շրջանում Նախիջևանի տարանցիկ նշանակությունն արժևորվեց նաև գլոբալ մակարդակում: Նախիջևանը կարող է դիտարկվել ինչպես Չինաստանը Եվրոպային կապող տրանսպորտային միջազգային տարանցիկ ճանապարհներից մեկի՝ «Միջին միջանցքի», այնպես էլ Հնդկաստանի նախաձեռնությամբ գործարկվող «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի կարևոր հանգույցներից մեկը:

Թուրքիան առնվազն վերջին մեկ տասնամյակում Նախիջևանի և Ադրբեջանի միջև ցամաքային կապի ապահովման հարցում Իրանի ունեցած գերակա դիրքը

փոխելուն ուղղված քայլեր է ձեռնարկում[141]: 2020 թ-ի 44-օրյա պատերազմից հետո ստեղծված աշխարհաքաղաքական իրադրությունից օգտվելով՝ Ադրբեջանը օրակարգ բերեց այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» հարցը, միաժամանակ փորձելով հասնել երկու ռազմավարական նպատակի՝ կտրել Հայաստան-Իրան ցամաքային կապը և Նախիջևանի հարցում ազատվել Իրանի կախվածությունից: Սակայն, հանդիպելով Հայաստանի ու Իրանի հակազդեցությանը, Բաքուն իր գործողություններում մարտավարական փոփոխություն իրականացրեց՝ ՀՀ նկատմամբ ագրեսիվ քաղաքականությանը զուգահեռ Թեհրանի հետ սկսեց բանակցել Իրանի տարածքով Նախիջևանին միանալու նոր երթուղու կառուցման շուրջ:

Թեհրանի և Բաքվի միջև տարանցման և էներգետիկայի ոլորտներում համատեղ նախագծեր իրականացնելու շուրջ ինտենսիվ փոխգործակցություն

2020 թվականի պատերազմի ավարտից հետո պատերազմում տարած հաղթանակի առթիվ Ադրբեջանին շնորհավորելով Իրանը նպատակ ուներ հետպատերազմական շրջափուլում Բաքվի հետ փոխադարձ վստահության հիման վրա հարաբերություններ ձևավորել: Իրանն այդ փուլում կարևորում էր Ադրբեջանի հետ տնտեսական համագործակցության ակտիվացումն ու համատեղ նախագծերի մեկնարկով երկկողմ

[141] Թուրքիայի նախաձեռնությամբ մեկնարկել է 2 միլիարդ խմ թողունակությամբ Նախիջևան-Իգդիր 80 կմ գազատար կառուցելու ծրագիրը: Ներկայումս Նախիջևանն Իրանի տարածքով սվոպային եղանակով է գազ ստանում է Ադրբեջանից: Թուրքիան, կառուցելով Նախիջևան-Իգդիր գազատարը, նպատակ ունի Նախիջևանից Իրանի ազդեցությունը թուլացնելու նպատակով գազ մատակարարել Նախիջևան:

հարաբերություններում փոխկապակցվածություն ձևավորելը:

Ռուսաստանի նախաձեռնությամբ 2021 թվականից տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակման նպատակով Հայաստանի և Ադրբեջանի միջև մեկնարկած բանակցությունների ֆոնին իրանական կողմն Ադրբեջանի նկատմամբ տնտեսական քաղաքականությունը մշակելիս կարևոր դեր էր հատկացնում Նախիջևանին: Իրանի նպատակն էր Հայաստանի ու Ադրբեջանի հետ համագործակցությամբ գործարկել Ջուլֆա-Նախիջևան-Երասխ երկաթգիծն ու այդ կերպ չեզոքացնել աշխարհատնտեսական շրջափակման սպառնալիքը:

Թավրիզ-Ջուլֆա-Նախիջևան երկաթգիծը կառուցվել է 1916 թվականին՝ Ղաջարների Ահմադ շահի կառավարման շրջանում: Ըստ իրանցի փորձագետների՝ այս երթուղին Իրանի՝ Եվրասիական տարածաշրջանին միանալու ամենակարճ և ամենաէժան երթուղին է[142]:

2021 թվականի նոյեմբերի 27-ին Աշգաբադում կայացած Տնտեսական համագործակցության կազմակերպության (ECO) անդամ երկրների ղեկավարների 15-րդ համաժողովի շրջանակում Իրանի և Ադրբեջանի նախագահների միջև կայացած հանդիպման ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել ակտիվացնել համագործակցությունը տարանցման և ճանապարհաշինության ոլորտներում[143]: Ռայիսի-Ալիև

---

[142] Ջուլֆա-Նախիջևան երկաթգծի շահագործմամբ Իրանի մուտքը Եվրասիական տարածաշրջան կդյուրացվի, 2022, https://www.irna.ir/news/84676836/, հասանելի է առ 09.08.2023, (պարսկերեն):

[143] Իրանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը Աշգաբադում, 2021, https://www.president.ir/fa/132980, հասանելի է առ 09.08.2023, (պարսկերեն):

հանդիպումից կարճ ժամանակ անց 2022 թվականի հունվարին Իրան-Ադրբեջան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ, Իրանի քաղաքաշինության և ճանապարհների նախարար Ռոսթամ Ղասեմիի գլխավորած պատվիրակությունը հատուկ չվերթով այցելում է Ադրբեջան: Մինչ Բաքու մեկնելը իրանական ինքնաթիռը վայրէջք է կատարում Ֆիզուլիի օդանավակայանում: Իրանական պատվիրակությանը դիմավորում է Ադրբեջանի փոխվարչապետ, Իրան-Ադրբեջան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ Շահին Մուստաֆաևը, որն իրանցի պաշտոնյաներին է ներկայացնում Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում իրականացվող վերակառուցման աշխատանքներն ու քննարկում Իրանի հետ համատեղ նախագծեր իրականացնելու հնարավորությունը[144]: Ռոսթամ Ղասեմիի՝ Ադրբեջան կատարած այցից կարճ ժամանակ անց 2022 թվականի մարտի 10-11-ը տևական դադարից հետո Բաքվում տեղի ունեցավ Իրան-Ադրբեջան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստը: Այն 44-օրյա պատերազմից հետո առաջին նիստն էր, և կողմերն իրենց ծրագրերը քննարկում էին արդեն ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում: Նիստի անցկացումը թեև նախատեսված էր Բաքվում, սակայն, Իրան-Ադրբեջան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ Ռոսթամ Ղասեմիի գլխավորած պատվիրակությունը մինչ Բաքու մեկնելն այցելում է Նախիջևան և հանդիպում Նախիջևանի

---

[144] Օտարերկրյա առաջին ինքնաթիռի վայրէջքը Ֆիզուլիի միջազգային օդանավակայանում, 2022, http://news.mrud.ir/news/104161/, հասանելի է առ 09.08. 2023, (պարսկերեն):

Ինքնավար Հանրապետության Գերագույն մեջլիսի նախագահ Վասիֆ Թալիբովի (1995-2022 թվականի դեկտեմբեր) և Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաևի հետ[145]:

Իրան-Ադրբեջան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստի ավարտին ի թիվս այլ փաստաթղթերի[146՝] «Արևելյան Զանգեզուրի և Նախիջևանի միջև Իրանի տարածքով հաղորդակցության նոր ճանապարհ կառուցելու մասին» Իրանի և Ադրբեջանի կառավարությունների միջև փոխըմբռնման հուշագիր է ստորագրվում[147]:

Ադրբեջանի կողմից այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» հարցով ագրեսիվ քաղաքականությանը զուգահեռ փաստացի 2021 թ.-ի մարտից առաջին անգամ Բաքուն Իրանի տարածքը սկսեց դիտարկել որպես Նախիջևանի հետ հաղորդակցություն հաստատելու այլընտրանքային ճանապարհ:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարար Ռոսթամ

---

[145] Իրանի ճանապարհների նախարարի այցն Ադրբեջան, 2022, https://www.iribnews.ir/fa/news/3383981/, հասանելի է առ 09.08.2023, (պարսկերեն):

[146] Արաքս գետի վրայով Իրանի տարածքով Ադրբեջանի և Նախիջևանի միջև կապի ապահովում, էներգետիկայի և ջրի ոլորտում համագործակցություն, Ադրբեջանում իրանական «Irankhodro» մեքենաշինական ընկերության գործունեության ընդլայնում, Նախիջևան-Մաշհադ երկաթգծի վերագործարկում, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում շինարարական աշխատանքներին իրանական ընկերությունների մասնակցություն, Աստարաչայ գետի վրա կամուրջի շինարարական աշխատանքների կազմակերպում:

[147] Նախիջևանի հարցում Իրանի և Ադրբեջանի համագործակցության մասին, 2022, https://www.iribnews.ir/fa/news/3384886/, հասանելի է առ 09.08.2023, (պարսկերեն):

Ղասեմիի հետ Բաքվում ունեցած հանդիպմանը կարևորել էր Իրանի տարածքով Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև կապ հաստատելու հնարավորությունը[148]: Իհարկե, Ադրբեջանը Նախիջևանին կապող միակ ճանապարհը ներկայումս էլ անցնում է Իրանի տարածքով, սակայն, Արցախյան 2-րդ պատերազմից հետո Իրանի և Ադրբեջանի միջև ցամաքային սահմանը երկարել է շուրջ 130 կմ-ով: Ներկայումս Ադրբեջանը Նախիջևանին փորձում է միանալ ոչ թե Արդաբիլ նահանգից՝ երկար ճանապարհ անցնելով Իրանի տարածքով, այլ անմիջապես Աղբանդի մոտից Արաքսն անցնելով մուտք գործել Նախիջևան: Նոր ձևավորվող ենթակառուցվածքները սպասարկելու նպատակով Իրանն ու Ադրբեջանը պայմանավորվել են նաև նոր անցակետ կառուցել Խոդաֆարինի շրջանում[149]:

«Նախիջևանի միջանցքի» ձևավորման շուրջ բանակցությունները

Եթե մինչև 2020 թվականի 44-օրյա պատերազմն Իրանը «Պարսից ծոց-Սև ծով» միջանցքի գործարկումը դիտարկում էր բացառապես Հայաստանի տարածքով, ապա տարածաշրջանային տրանսպորտային ենթակառուցվածքաների ապաշրջափակման ֆոնին Իրանը որպես «Պարսից ծոց-Սև ծով» միջանցքի երթուղի սկսեց դիտարկել նաև Ջուլֆա-Նախիջևան երկաթուղային

---

[148] Իլհամ Ալիևի և Ռոսթամ Ղասեմիի հանդիպումը, 2022, https://azerbaijan.mfa.ir/portal/newsview/673284, հասանելի է առ 09.08.2023, (պարսկերեն):

[149] Խոդաֆարինի կամուրջի բացման շուրջ պայմանավորվածություն, 2021, https://www.tasnimnews.com/fa/news/1400/05/21/2553472/ , հասանելի է առ 09.08.2023, (պարսկերեն):

հանգույցը: Այդ նպատակով 2021 թվականի դեկտեմբերի 7-ին Իրանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև «Պարսից ծոց-Սև ծով» միջանցքի գործարկման շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերվել[150]: Ըստ այդ պայմանավորվածության՝ երթուղին կարող է անցնել ինչպես Իրան-Ադրբեջան-Վրաստան, այնպես էլ Ջուլֆա-Նախիջևան-Հայաստան-Վրաստան ուղղություններով: Հետպատերազմական փուլում Իրանը ոչ այնքան կարևորում էր այն հանգամանքը, թե նոր տարանցիկ նշանակության նախագծերը տնտեսական ինչ շահույթ են ապահովելու, այլ Թեհրանի համար առաջնայինն այն է, որպեսզի Իրանը դուրս չմնա նոր ձևավորվող նախագծերից:

2021 թվականի մայիսին Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ իրականացված ագրեսիայից հետո տարածաշրջանում միջազգայնորեն ճանաչված սահմանների անխախտելիության մասին հայտարարությունների[151] համատեքստում Ադրբեջանի գործողություններում մարտավարական փոփոխություններ տեղի ունեցան: 2022 թվականի մարտին Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին կապերի բաժնի ղեկավար, նախագահի օգնական Հիքմեթ Հաջիևը Թուրքիայում տեղի ունեցած «Անթալիայի դիվանագիտական ֆորումի» շրջանակում թուրքական ԶԼՄ-ներին տված հարցազրույցում առաջին անգամ հայտարարեց Իրանի

---

[150] Իրան-Ադրբեջան-Վրաստան-Եվրոպա նոր միջանցք կձևավորվի, 2021, https://www.mehrnews.com/news/5373573/, հասանելի է առ 09.08.2023, (պարսկերեն):

[151] Մեր կարմիր գիծը Հայաստանի տարածքային ամբողջականությունն է. Իրանի ԱԳ նախարար, 2021, https://armenpress.am/arm/news/1041595.html, հասանելի է առ 08.08.2023:

տարածքով Նախիջևանին միանալու Բաքվի նպատակադրության մասին[152]:

Հաջիևի հայտարարությունից մեկ ամիս անց Իրանի և Ադրբեջանի կառավարությունների միջև ստորագրված «Արևելյան Զանգեզուրի և Նախիջևանի միջև Իրանի տարածքով հաղորդակցության նոր ճանապարհ կառուցելու մասին» փոխըմբռնման հուշագիրը հաստատվեց Ադրբեջանի նախագահի կողմից[153]:

Գնահատելով Իրանի տարածքով Նախիջևանին միանալու մասին Ադրբեջանից հնչող հայտարարությունները՝ նկատելի է, որ Բաքուն դրա վերաբերյալ բարձրաձայնում է այն ժամանակ, երբ Հայաստանի նկատմամբ որևէ ագրեսիա է նախապատրաստում՝ այդ կերպ փորձելով ծրագրվող գործողությունների նկատմամբ շեղել Իրանի ուշադրությունը:

2022 թվականի հուլիսին Թեհրանում Աստանայի ձևաչափով տեղի էր ունեցել Իրանի, Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների եռակողմ հանդիպումը, որի շրջանակում Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ հանդիպումների ընթացքում ընդգծել էր Հայաստան-Իրան ցամաքային սահմանի անխախտելիությունը: «*Իրանը դեմ կլինի և չի հանդուրժի այն քաղաքականությունն ու ծրագրերը, որոնց նպատակը կլինի Հայաստանի և Իրանի միջև հազարամյա սահմանի*

---

[152] H. Haciyev: İran ərazisindən keçməklə Şərqi Zəngəzurla Naxçıvan arasında kommunikasiyalarin yaradilmasi haqqinda Anlaşma Memorandumunun, 2022, https://bit.ly/3LGNwvp , հասանելի առ 09.08.2023:

[153] Алиев утвердил меморандум о транспортной коммуникации В.Зангезура и Нахчывана через Иран, 2022, http://interfax.az/view/863772, հասանելի է առ 09.08.2023:

կտրվելը»,-հայտարարում էր Իրանի հոգևոր առաջնորդը[154]: Այդ հանդիպումից օրեր առաջ Ադրբեջանի ԱԽ քարտուղար Ռամիլ Ուսուբովը, ընդգծելով Իրանի տարածքով Նախիջևանին միանալու նպատակով ճանապարհի կառուցման հարցում Բաքվի հետաքրքրվածությունը, մասնավորապես նշել է. «*Ադրբեջանը սահմանազատման և սահմանագծման աշխատանքներից հետո ցանկանում է բացել Զանգեզուրի միջանցքը: Ադրբեջանն արդեն կարողացել է համաձայնության գալ մյուս հարևանի՝ Իրանի հետ: Իլհամ Ալիևի նախաձեռնությամբ Իրանի հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրի համաձայն՝ Իրան-Հայաստան սահմանից 5 կմ հարավ կկառուցվի Արևելյան Զանգեզուրն ու Նախիջևանն իրար կապող նոր տրանսպորտային հանգույց: Ադրբեջանի նախագահը հայտարարել է, որ այդ նոր տրանսպորտային հանգույցը շահագործման է հանձնվելու ընդամենը 5 կմ աշխարհագրական տարբերությամբ: Հայաստանը հերթական անգամ սխալվել է իր հաշվարկներում: Մենք հերթական անգամ կարող ենք մեկուսացնել Հայաստանին՝ զրկելով գլոբալ նախագծերին մասնակցելու հնարավորությունից*»[155]: Ադրբեջանի ԱԽ քարտուղարի հայտարարությունից կարճ ժամամանակ անց կրկին Նախիջևանի հարցում Իրանի և Ադրբեջանի համագործակցության մասին է խոսել Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը, որը Թուրքիա կատարած

---

[154] ՌԴ նախագահի հանդիպումն Իրաի հոգևոր առաջնորդի հետը, 2022, https://farsi.khamenei.ir/news-content?id=50657, հասանելի է առ 09.08.2023 (պարսկերեն):

[155] Ադրբեջանի ԱԽ քարտուղարի հարցազրույցը, 2022, https://www.youtube.com/watch?v=dNbpEYi6uAg&list=PLMQcwD-eh6VjbE-9QQPDdenmOqNIKIcBC&index=7, հասանելի է առ 09.08.2023:

այցի ընթացքում հայտարարել է. «*Հայաստանը ցանկանա, թե ոչ, Ադրբեջանի արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև այլընտրանքային կապ կստեղծվի: Ադրբեջանը Նախիջևանի հետ կկապվի Իրանի տարածքով: Ներկայումս Հայաստանին հնարավորություն է տրվել անմասն չմնալ տարածաշրջանային համագործակցությունից*»[156]:

2022 թվականի սեպտեմբերի 21-ին, այսինքն՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի տարածքի նկատմամբ ագրեսիայից մեկ շաբաթ անց Իրանի ճանապարհների և քաղաքաշինության նախարար Ռոսթամ Ղասեմիի և Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաևի մասնակցությամբ տեղի ունեցավ Արաքս գետի վրա Աղբանդի կամուրջի կառուցման մեկնարկի պաշտոնական արարողությունը[157]: Այդ կամրջով Ադրբեջանն Իրանի տարածքով կկապվի Նախիջևանին: Իրանական կողմն այդ նոր երթուղին արդեն անվանում է «Նախիջևանի միջանցք»: Կամրջի երկարությունը կազմում է 220 մետր: Սկզբնական շրջանում այն ավտոմեքենաների համար կշահագործվի, իսկ հետո նախատեսվում է երկաթգիծ ևս անցկացնել: Այդ կամրջի շահագործումից հետո Ադրբեջանից Նախիջևան ճանապարհը կկազմի 55 կմ: Այն դեպքում, որ այժմ Ադրբեջանը Արդաբիլի հատվածից Նախիջևանին միանում է 163 կմ ճանապարհ անցնելով:

Ադրբեջանը, հաշվի առնելով Հայաստան-Իրան ցամաքային սահմանի հարցում Իրանի զգայուն վերաբերմունքը, ընդգծում է Իրանի տարածքի

---

[156] Նախիջևանի հետ Իրանի տարածքով կկապվենք, 2022, https://nasrnews.ir/detail/71012/ , հասանելի է առ 09.08.2023 (պարսկերեն):

[157] Աղբանդի կամուրջի շինարարությունը, 2021, https://azerbaijan.mfa.gov.ir/portal/newsview/694069, հասանելի է առ 09.08.2023 (պարսկերեն):

կարևորությունը՝ վստահ լինելով, որ դա արժանանալու է իրանական կողմի հավանությանը: Այսինքն՝ Բաքուն այդ կերպ Թեհրանի ուշադրությունը փորձում է շեղել Հայաստան-Իրան ցամաքային սահմանից՝ ցույց տալով, որ ցանկություն չունի խաթարելու հայ-իրանական սահմանը և իր նպատակն իբր տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակումն ու փոխշահավետ տնտեսական համագործակցությունն է:

Ուշագրավ է այն իրողությունը, որ Նախիջևանի միջանցքի ձևավորման շուրջ բանակցություններում ներգրավված են նաև Իրանի ու Ադրբեջանի ուժային կառույցների ներկայացուցիչները: Մասնավորապես այդ հարցով առարկայական բանակցություններ են տեղի ունեցել Իրանի ՀՈՒ ԳՇ պետի և Ադրբեջանի պաշտպանության նախարարի միջև:

Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը 2022 թվականի հունվարի 25-ին Իրանի ՀՈՒ ԳՇ պետ Մոհամմադ Բաղերիի հրավերով երկօրյա այցով մեկնել էր Իրան[158], որտեղ գեներալ Բաղերիի հետ բացի անվտանգային հարցերից, քննարկել էր նաև երկկողմ համատեղ նախագծերի իրականացմանն առնչվող հարցեր: Այցի ընթացքում կողմերն առարկայական բանակցություններ են վարել հետևյալ հարցերի շուրջ.

- ռազմական համագործակցության ակտիվացում (Ադրբեջանը գուցե փորձի որոշ զինատեսակներ գնել Իրանից),

[158] Ադրբեջանի պաշտպանության նախարարի այցն Իրան, 2022, https://www.isna.ir/news/1400110604725/, հասանելի է առ 09.08.2023 (պարսկերեն):

- Իրանի և Ադրբեջանի միջև նոր ձևավորվող սահմանին անվտանգության ապահովման աշխատանքների կազմակերպում,
- Իրանի սահմանին Իսրայելի ներկայության շուրջ քննարկում: Իրանի ՀՈՒ ԳՇ պետը հայտարարել է, որ տարածաշրջանում (ոչ Ադրբեջանում) Իսրայելի ներկայությունը սպառնալիք է ներկայացնում տարածաշրջանի երկրներին,
- Խոդաֆարինի սահմանային անցակետի բացման հետ կապված սահմանապահ ծառայությունների աշխատանքի համակարգում,
- Խոդաֆարինի և Ղիզ Ղալասիի ջրամբարների շահագործում և անվտանգության ապահովում,
- Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում կատարվող վերակառուցման աշխատանքներում Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ենթակայությամբ գործող շինարարական կազմակերպությունների ներգրավում,
- Կասպից ծովում զորավարժություններ անցկացնելու պարագայում երկկողմ խորհրդակցությունների անցկացում:

2022 թվականի մայիսի 18-ին երկօրյա աշխատանքային այցով Իրան է այցելել Ադրբեջանի փոխվարչապետ, Իրան-Ադրբեջան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ Շահին Մուստաֆաևը: Նա առանձին հանդիպումներ է ունեցել Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիր-Աբդոլլահիանի, քաղաքաշինության և ճանապարհների նախարար Ռոսթամ

Ղասեմիի, ինչպես նաև ՀՈՒ ԳԾ պետ Մոհամմադ Հոսեյն Բաղերիի հետ[159]:
Հանդիպումների ընթացքում քննարկվել են հետևյալ ոլորտներում երկկողմ համագործակցության հարցերը.

- Իրանի տարածքով Ադրբեջանի և Նախիջևանի միջև տրանսպորտային կապի ապահովում,
- Իրանի տարածքով Թուրքմենստանից դեպի Ադրբեջան սվոպային եղանակով գազի մատակարարում,
- տարանցիկ նշանակության ենթակառուցվածքների ձևավորում,
- անվտանգային հարցերի քննարկում:

Ջուլֆա-Նախիջևան երկաթգծի տարանցիկ նշանակությունը

Իրանի տարածքով անցնում են միջազգային երկաթուղային հետևյալ 4 միջանցքները.

- Ալմա Աթա-Ստամբուլ[160]
- Ալմա Աթա-Բանդար Աբբաս[161]
- Իսլամաբադ-Ստամբուլ[162]

---

[159] Մուստաֆաևի հանդիպումը գեներալ Բաղերիի հետ, 2022, https://www.farsnews.ir/news/14010228000980/, հասանել է առ 09.08.2023, (պարսկերեն):

[160] «Ալմա Աթա-Ստամբուլ» միջանցքը (1924 կմ, 22 ժ. 51 ր.) անցնում է Սարախս (Թուրքմենստաի սահման)-Սեմնան-Թեհրան-Թավրիզ-Ռազի (Թուրքիայի սահման) երթուղով:

[161] «Ալմա Աթա-Բանդար Աբբաս» միջանցքը (1548 կմ, 19 ժ, 18 ր.) անցնում է Սարախս-Մաշհադ-Քերման-Բանդար Աբբաս (Պարսից ծոց) երթուղով:

[162] «Իսլամաբադ-Ստամբուլ» միջանցքը (5116 կմ, 64 ժ.) անցնում է Իսլամաբադ (Պակիստան)-Սաբզեվար-Ղազվին-Զանջան-Թավրիզ-Ռազի (Թուրքիայի սահման) երթուղով:

- Հյուսիս-հարավ[163]

Վերջին շրջանում իրանցի փորձագետները մտահոգություն են հայտնում, որ Իրանն այնքան ուշացրեց Չաբահար-Զահեդան երկաթգծի կառուցումը, որ ներկայումս ներդրողներն այլևս հետաքրքրված չեն Չաբահարի նավահանգստով: Այժմ գրավիչ են Պակիստանի Գուադար (Gwadar) նավահանգստի հնարավորությունները:

Այսպիսով, եթե Ռաշտ-Աստարա (Իրանի տարածքում) հատվածը կառուցվի, ապա դրա միջոցով հնարավոր կլինի Ղազվինի հատվածից միանալ դեպի Ստամբուլ և Բանդար Աբբաս գնացող ուղղություններին:

Բացի այն փաստից, որ Իրանը Նախիջևանին ու Ադրբեջանին իրար կապելով՝ Բաքվի նկատմամբ գերակայություն է ձեռք բերում, Թեհրանը Ջուլֆա-Նախիջևան երկաթուղային հանգույցը դիտարկում է Եվրոպային, Ռուսաստանին, ինչպես նաև Թուրքիային միանալու հնարավորություն:

Իրանի տարածաշրջանային հավասարակշռված քաղաքականությունը հուշում է, որ այս դեպքում Իրանի համար նախընտրելի կլինի, որ Ռաշտ-Աստարա երկաթգիծը

---

[163] «Հյուսիս-հարավ» միջանցքը երեք ուղղություն է նախատեսում՝ 1. Բոմբեյ-Իրան-Ադրբեջան-Ռուսաստան, 2. Բոմբեյ-Իրան-Կասպից ծով-Ակտաու, 3. Բոմբեյ-Իրան-Կենտրոնական Ասիա-Ռուսաստան: «Հյուսիս-հարավ» երթուղին լիարժեք չի գործում, այն մասնակի է կառուցված: Նախատեսվում է, որ այս երթուղին պետք է սկիզբ առնի Չաբահարի նավահանգստից՝ հասնի Ադրբեջանի սահման, այնտեղից շարունակվի դեպի Ռուսաստան: Չաբահար-Զահեդան-Ղազվին-Ռաշտ-Աստարա (Իրանի տարածք)-Աստարա (Ադրբեջանի տարածք) երթուղուց ներկայումս կառուցվել են միայն Ղազվին-Ռաշտ 171 կմ և Աստարա-Աստարա (10 կմ, որից 8.5-ը Ադրբեջանի, 1.5-ը՝ Իրանի տարածքում) հատվածները: Ռաշտ-Աստարա (Իրանի տարածքում) 164 կմ և Չաբահար-Զահեդան 630 կմ հատվածները դեռ չեն կառուցվել:

գործարկվի Ջուլֆա-Նախիջևան-Երասխ երկաթգծի հնարավոր գործարկմանը զուգահեռ: Այդ կերպ Իրանը հնարավորություն կունենա հավասարապես ներկա լինել ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի տարածքով անցնող տարանցիկ երթուղիներում:

Դեռ 2018 թվականից Իրանի, Ռուսաստանի և Ադրբեջանի միջև առկա է երկաթուղային հաղորդակցություն: Ռաշտ-Աստարա և Չաբահար-Զահեդան երկաթուղային նախագծերի գործարկմամբ «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը լիարժեք կգործի: Իրանական Աստարան և ադրբեջանական Աստարան իրար կապվում են երկաթուղով, որն անցնում է Աստարաչայ գետի վրա կառուցված 80 մետրանոց կամրջով: Երկաթգծի 8.5 կմ հատվածը կառուցվել է Ադրբեջանի, իսկ 1.5 կմ-ը՝ Իրանի տարածքում: 2018 թվականի մարտին տեղի է ունեցել երկաթգծի բացման պաշտոնական արարողությունը: 2019 թ. մարտին գործարկվել է Ղազվին-Ռաշտ հատվածը: Այս պահին անավարտ է մնացել Ռաշտ-Աստարա 170 կմ հատվածը, որի շինարարության համար Ադրբեջանը պարտավորվել էր 500 մլն. դոլարի վարկ տրամադրել, սակայն, այդպես էլ չի տրամադրել[164]: Ռուս-ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցների և արտահանումների հետ կապված առաջացած խնդիրների համատեքստում Ռաշտ-Աստարա երկաթգծի նկատմամբ ռուսական կողմն է ներակումս հետաքրքրություն ներկայացրել: Այդ նախագծի գործարկման

[164] О сотрудничестве Ирана и Азербайджана в сфере железнодорожного транзита, 2018, http://www.iimes.ru/?p=45019, հասանելի է առ 09.08.2023:

շուրջ վերջին մեկ տարվա ընթացքում Իրանի և Ռուսաստանի միջև ինտենսիվ բանակցություններ են տեղի ունենում[165]:

Եզրակացություն

- Ադրբեջանը, «Նախիջևանի միջանցքի» գործարկմանն ուղղված գործողություններով փորձում է Իրանի և Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանմամբ շահագրգռված այլ դերակատարների ուշադրությունը շեղել այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը» բռնի ուժով բացելու իր նախաձեռնություններից: Մյուս կողմից էլ, Իրանի հետ համատեղ նախագծեր իրականացնելով, Ադրբեջանը փորձում է իր դերակատարությունը մեծացնել Արևմուտքի և Իսրայելի մոտ, այդ նախագծերին մասնակցությունից հրաժարվելու դիմաց կարևոր այդ դերակատարներից ակնկալելով քաղաքական և ֆինանսական աջակցություն:
- Ադրբեջանը, փորձելով խեղաթյուրել «Զանգեզուրի միջանցքը» բռնի ուժով բացելու հարցում միջազգային հանրության ընկալումները, հաճախ «Զանգեզուրի միջանցք» ասելով նկատի է ունենում Իրանի տարածքով Նախիջևանի հետ կապվող ճանապարհը: Այսինքն, երբ անհրաժեշտություն է լինում ընդգծելու, թե իբր խաղաղ նպատակներ է հետապնդում, մատնացույց է անում Իրանի հետ համագործակցությունը, սակայն, հարմար պահին շարունակում է Հայաստանի նկատմամբ ագրեսիվ գործողությունները:

---

[165] Իրանի և Ռուսաստանի համագործակցությունը Ռաշտ-Աստարա երկաթգծի կառուցման հարցում, 2023, https://bit.ly/3LD6Ych, հասանելի է առ 09.08.2023 (պարսկերեն):

- Բաքուն «Նախիջևանի միջանցքի» շուրջ Իրանի հետ փոխգործակցությունը փորձում է ծառայեցնել «Զանգեզուրի միջանցքի» բացման ուղղությամբ իր նպատակների իրագործմանը: Մասնավորապես Ռուսաստանի միջոցով փորձում է ճնշումներ գործադրել Հայաստանի վրա՝ բռնի ուժով բացելու այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը»: Բաքվի տրամաբանությամբ, եթե Ռուսաստանը չբավարարի «Զանգեզուրի միջանցքի» բացման հարցում Ադրբեջանի պահանջները, ապա Ադրբեջանը Նախիջևանի հետ կկապվի Իրանի տարածքով՝ Ռուսաստանին զրկելով տարանցիկ ճանապարհի նկատմամբ վերահսկողություն ունենալու հնարավորությունից: Արդյունքում՝ զգալիորեն կմեծանա տարածաշրջանում Ռուսաստանի մրցակից Իրանի դերը:
- Ի. Ալիևի և Հ. Հաջիևի կողմից Իրանի տարածքով Նախիջևանին միանալու մասին հրապարակային հայտարարությունները կարող են կապված լինել Հայաստան-Թուրքիա հարաբերություններում տեղի ունեցող վերափոխումների, ինչպես նաև Ռուսաստանի գործոնի հետ: Երբ Հաջիևն Անթալիայում հայտարարում է, որ «*քանի որ Հայաստանը հրաժարվում է բացել «Զանգեզուրի միջանցքը» ապա Ադրբեջանը Նախիջևանին կկապվի Իրանի տարածքով*», Անկարային ակնարկում է, որ Ադրբեջանն ու Թուրքիան միմյանց հետ Հայաստանի փոխարեն կարող են կապվել Իրանի տարածքով: Ըստ ամենայնի՝ Ադրբեջանն այդ կերպ փորձում է խափանել հայ-թուրքական երկխոսությունը՝ ընդգծելով, որ Իրանի տարածքն ավելի նախընտրելի է, քան Հայաստանի:

Ըստ Ադրբեջանի՝ եթե Հայաստանի տարածքով Նախիջևանին կապվելու իր ցանկությունը չի իրագործվում, ապա ավելի լավ է կապվել Իրանի տարածքով, քան Ռուսաստանի վերահսկողությամբ բացվող ճանապարհով: Այստեղ Իրանը ևս շահագրգիռ կողմ է, և ամեն ինչ կանի, որպեսզի Թուրքիան և Ադրբեջանը միմյանց կապվեն իր տարածքով, այլ ոչ թե Հայաստանի:

- Ադրբեջանը ցանկանում է Իրանի ուշադրությունը շեղել Հայաստանի և Իրանի միջև ընթացող բանակցություններից, որոնք վերաբերում են Հայաստանի տարածքում տարանցիկ նշանակության ավտոմայրուղու շինարարական աշխատանքներին Իրանի մասնակցությանը:
-

ARMEN ISRAYELYAN
PhD, Institute of Oriental Studies, NAS RA, Researcher
Department of Iranian Studies, YSU, Assistant
E-mail: armen.israyelian@gmail.com

THE EXPECTATIONS OF IRAN AND AZERBAIAJN REGARDING THE NAKHIJEVAN CORRIDOR PROJECT

Taking geopolitical situation after the 44-day war in 2020, Azerbaijan put the issue of the so-called "Zangezur corridor" on the agenda. Baku is trying to achieve two strategic goals: to close the land connection between Armenia and Iran and to get out of Iran's dependence on the Nakhijevan issue. However, Azerbaijan, faced with the opposition of Armenia and Iran, changed its strategy. In parallel with its aggressive policy against Armenia,

Baku began negotiations with Tehran on the construction of a new route connecting Nakhijevan through Iranian territory. In parallel with the aggressive policy of Azerbaijan in the issue of the so-called "Zangezur corridor" Baku for the first time since March 2021 began to consider the territory of Iran as an alternative way of establishing communication with Nakhichevan. In March 2022, Hikmet Hajiyev, Head of the Foreign Relations Department of the President of Azerbaijan and Assistant to the President, in an interview with Turkish media during the "Antalya Diplomatic Forum" held in Turkey, first stated Baku's intention to connect Nakhichevan through the territory of Iran. A few months after Hajiyev's statement, Ramil Usubov, secretary of the Azerbaijani Security Council, and Jeyhun Bayramov, Azerbaijani Foreign Minister, also proclaimed Baku's aims to link Nakhichevan through the territory of Iran.

By manipulating the issue of the "Nakhijevan corridor," Azerbaijan is trying to divert the attention of countries that are interested in preserving the territorial integrity of Armenia from its initiatives to forcibly open the so-called "Zangezur corridor. On the other hand, by implementing joint projects with Iran, Azerbaijan is trying to stress its role in relations with the West and Israel, expecting political and financial support from these important actors in exchange for refusing to participate in these projects.